ՎԻԿՏՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԾՏԵՐԻ ՀՈՒՆՁԸ ԱՂՎԵՍԻ ԴՈՒՆՁԸ

ՊԵՏՀՐԱՏ 1938 ԵՐԵՎԱՆ

891.99մ
Վ-30

891.9915
Վ-30
ար

2011-07

ՎԻԿՏՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԾՏԵՐԻ ՀՈՒՆՁԸ
ԱՂՎԵՍԻ ԴՈՒՆՁԸ

Նկարներ
ԱՆ. ԴԱՍՊԱՐՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՄԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

17 APR 2014

13028

862
38

Յերկու ծիտիկ շատ սիրով,
Ապրում էին անվրդով,
Թե ընի մեջ, թե դրսում,
Մեկտեղ էին միշտ լինում։

Մեկ որ ծառի մերկ ճյուղին,
Յերգում էին միասին,
Նկատեցին՝ ծառի տակ,
Վայը է ընկած մի քսակ։

Նրանք իջան են ճյուղից,
Քաշքշեցին քսակից,
Ես քսակը պատռվեց,
Միջից ցորեն դուրս թափվեց։

— Ծիվ-ծիվ,-ծիվ-ծիվ, իմ անգին,
Ասաց մեծը փոքրիկին,
— Յեկ ցորենը շուտ տանենք,
Հողը վարենք ու ցանենք։

— Ես ցորենը, վոր ցանենք,
Առատ բերքը կհնձենք,
Կապահովվենք մենք արդեն,
Ել չենք թռչի դես ու դեն։

Բարձր ձայնով յերգեցին,
Ուրախացան, պարեցին,
Խոսք տվեցին, խոսք առան,
Պատրաստվեցին, վոր գնան։

Մին ել, ը՛հը,
Մի ագռավ,
Նրանց կողքին
Վեր յեկավ։

— Շատ լավ բան եք մտածել,
Բայց կարող եք վար անել։
Ա՛յ, յես լինեմ մշակող,
Հողը վարող ու ցանող։

— Շատ լավ,
Շատ լավ,—
Ասացին
Սև ագռավին
Տեղ տվին։

Նորից ուրախ յերգեցին,
Յորենն ել յետ ժողվեցին,
Խոսք տվեցին, խոսք առան,
Պատրաստվեցին, վոր գնան։

Մին ել, ը՛հը,
Ծառի տակ,
Մեջտեղ ընկավ
Մի սարյակ։

— Շատ լավ բան եք մտածել,
Բայց չե՞ պետք է պահպանել,
Մորեխներից այն դաժան.
Յես կլինեմ պահապան։

—Շատ լավ,
Շատ լավ,—
Ասացին,
Սարյակին ել,
Տեղ տվին։

Բարձր ձայնով յերգեցին,
Ծտավարի պարեցին,
Խոսք տվեցին, խոսք առան,
Պատրաստվեցին, վոր գնան։



Մին ել, ը՛հը,
Ծառի տակ,
Մեջտեղ ընկավ
Մի տատրակ։

—Լավ հնձվոր եմ, ա՛յ, տեսեք,
Ձեր շարքերում տեղ տվեք։
Ունեմ մանգաղ, գերանդի,
Յես գործ կանեմ տաս մարդի։

—Շատ լավ,
Շատ լավ,—
Ասացին,
Տատրակին ել
տեղ տվին։

Շարքով, կարգով կանգնեցին,
Հարցը նորից քննեցին,
Խոսք տվեցին, խոսք առան,
Պատրաստվեցին, վոր գնան։

Մին ել ըհը՛,
Մի մուկիկ,
Մեջտեղ ընկավ
Վոնց կծիկ։

—Աղունն աղալու համար
Վարպետ է պետք անպատճառ.
Ատամներով յես կաղամ
Ու ձեզ համար կխաղամ։

— Շատ լավ,
Շատ լավ,—
Ասացին,
Ես մուկիկին
Տեղ տվին։

Նորից հարցը քննեցին,
Ծվվացին, ծվացին,
Խոսք տվեցին, խոսք առան
Պատրաստվեցին, վոր գնան։

Մին էլ, ընը՛,
Խիստ հատու,
Մեջտեղ ընկավ
Մի կատու։

— Հունցեմ հունցը ձեր բերքի,
Ոգնենք իրար, մեկ-մեկի.
Ցես էլ թխեմ լավաշ հաց,—
Մլավելով նա ասաց։

—Շատ լավ,
Շատ լավ,—
Ասացին,
Հացթուխ կատվին
Տեղ տվին։

Յերկու ծիտիկ ու սարյակ,
Մուկիկ, կատու և տատրակ,
Մի հաշտ խմբակ կազմեցին,
Մեկտեղ առաջ շարժվեցին։

—Իմ ընկերներ, սրտակից,—
Խոսեց ծիտը շատ հանգիստ,—
Այս առվակի մոտ, յեկեք,
Հողը վարենք ու ցանենք։

Ագռավն առավ մի ձողիկ
Ու փորփորեց հողը պիրկ,
Հատիկները են սիրուն
Ցանեց հողում շատ փխրուն։

—Իսկ դու, սարյակ, ուշադիր
Ամեն կողմից լավ հսկիր,
Հսկիր արտը թշնամուց.
Սրիր ականջ ու կտուց։

Անցնում էին որերը,
Գալիս էին նորերը,
Դեղին հասկերը հասան,
Հողից չորս թիզ բարձրացան։

Հասուն արտի ափերով
Յեկավ տատրակը թափով,
Մեծ գերանդին հաղթ ուսին,
Հնձեց արտը մութ-լուսին։

Թռչկոտելով շատ ուրախ
Յեկավ մուկիկն են անվախ,
Ատամներով մանր ու սուր
Նա պատրաստեց լավ ալյուր։

862
38

Յեկավ կատուն հեվիհեվ,
Բանեցնելով հաղար ձեվ,
Մեջքին կապած մի գոգնոց,
Ուսին գցած մեծ սփռոց։

Շինեց թոնիր ու մի ակ,
Հունցեց ալյուրը ճերմակ,
Թխեց հացերը՝ լավաշ
Իր գործիքով հնամաշ։

Իսկ ծառերը միասին
Ոգնում էին ժիր կաղվին,
Ծլվլալով իրար հետ,
Թռչկոտելով առաջ-յետ։

Ծիտիկ սարյակ ու մուկիկ.
Ագռավ, տատրակ ու փիսիկ,
Լավաշ հացը փռեցին,
Ծալապատիկ նստեցին։

Մին էլ, ըհը՛,
Քարի պես,
Մեջտեղ ընկավ
Մի աղվես։

— Բարի աջողում, ջանիկներ,
Իմ սիրունիկ բալիկներ,
Այս արեվշող կեսորին
Ի՞նչ եք անում միասին։

Ես առավոտից քիչ հեռու,
Լավ տուն ունեմ ձեզ տալու,
Ցեկեք միջին ապրեցեք,
Կերեք, խմեք, պարեցեք...

Աչքով արին մեկ-մեկու,
Են ագռավին ու կատուն.
—Եղ վոր որից անզգամ,
Դարձել ես մեզ բարեկամ։

Ա՛յ ավազակ, խարդախ, գող
Թալխի վասակը լափող։
Հերիք չեղավ խափես մեզ,
Ամեն մեկիս ջոկ բռնես։

—Վրա տվեք եղ փչին,—
Ամեն կողմից գոռացին,—
—Սարյակ, հասիր դու աչքին,
Մուկիկ, թռիր ականջին...

Վրա տվին միատեղ
Ես աղվեսին տեղն ու տեղ՝
Բուրդը գզին, փախցրին,
Իզն ու Թոզը կորցրին։

Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավլիտ լիազոր Կ. 4702 Հրատ. 1064.
Պատվեր 1050. Տիրաժ 3000
Թուղթ 62×94 Տպագր. 2 մամ.
Մեկ մամուլում 13040 նիշ. Հեղինակային 3/4 մամ.
Հանձնված է տպագրության 15 ոգոստոսի 1937
Ստորագրված է տպագրության 4 դեկտ. 1937
Գինը 1 ռ.

Պետհրատի տպարան, Ցերևան. Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0409143

70

27
13028